

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

11.02.2020թ.

ժ.11:00

Մասնակցում էին՝ Ս.Մասգականյան (խորհրդի նախագահ), Գ.Մանյան, Գ.Գևորգյան, Ն.Բաղդասարյան, Վ.Դավթյան, Լ.Պետրոսյան, Ա.Սաֆյան (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար):
Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան, Գ.Մուրադյան, Վ.Արևշարյան, Մ.Երիցյան, Լ.Խաչատրյան, Ս.Մովսիսյան, Լ.Քալանթարյան, Վ. Արևշարյան, Ի. Բարոյան:

Օրակարգի նախագծում երեք հարց.

1. «Վիճակագրական կոմիտեի կողմից հավաքման ենթակա մի շարք վիճակագրական հաշվետվությունների (ըստ ռեսպոնդենտների տարեկան շրջանառությունների շեմերի) հավաքման պարբերականության և հավաքման դադարեցման մասին» հարցը:

/Զեկուցողներ՝ Ա. Հարությունյան, Ա. Ավետիսյան/

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1. Հաղորդում Ճապոնիայի Չիբա քաղաքում 2020 թվականի հունվարի 20-ից 24-ը ՄԱԿ-ի վիճակագրական բաժնի և Ասիական Զարգացման Բանկի հետ համատեղ կազմակերպված «Ռեսուրսներ-օգտագործում աղյուսակներ» թեմայով տարածաշրջանային դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Լ. Խաչատրյան, Ս.Մովսիսյան/

2.2. Հաղորդում Վրաստանի Բորժոմի քաղաքում 2020 թվականի հունվարի 21-ից 23-ը «Հարավային Կովկասում կանանց տնտեսական հզորացում» ծրագրի մշտադիտարկման «Մարտահրավերներ և հնարավորություններ» տարածաշրջանային աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան/

2.3. Հաղորդում Լյուքսեմբուրգ քաղաքում 2020 թվականի հունվարի 22-ից 23-ը Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից կազմակերպված «Վիճակագրությունն Արևելյան գործընկերության միջոցով» (STEP) տարածաշրջանային ծրագրի հիմնական ազգային համակարգողների երկրորդ հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա. Սաֆյան/

2.4. Հաղորդում Լիտվայի Վիլնյուս քաղաքում 2020 թվականի հունվարի 28-ից 31-ը Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից «Վիճակագրությունն Արևելյան գործընկերության միջոցով» ծրագրի շրջանակներում կազմակերպված «ԵՄ բիզնես ռեգիստրների կանոնակարգերի և առաջարկությունների ձեռնարկի» վերաբերյալ ուսումնական ծրագրին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Վ. Արևշարյան, Ի. Բարոյան/

3. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Վիճակագրական կոմիտեի կողմից հավաքման ենթակա մի շարք վիճակագրական հաշվետվությունների (ըստ ռեսպոնդենտների տարեկան շրջանառությունների շեմերի) հավաքման պարբերականության և հավաքման դադարեցման մասին» հարցը:

/Զեկուցողներ՝ Ա. Հարությունյան, Ա. Ավետիսյան/

Որոշեցին՝

հաստատել որոշումն ըստ ներկայացված նախագծի:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1. Հաղորդում՝ Ճապոնիայի Չիբա քաղաքում 2020 թվականի հունվարի 20-ից 24-ը ՄԱԿ-ի վիճակագրական բաժնի և Ասիական Զարգացման Բանկի հետ համատեղ կազմակերպված «Ռեսուրսներ-օգտագործում աղյուսակներ» թեմայով տարածաշրջանային դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Լ. Խաչատրյան, Ս.Մովսիսյան/

2.2. Հաղորդում՝ Վրաստանի Բորժոմի քաղաքում 2020 թվականի հունվարի 21-ից 23-ը «Հարավային Կովկասում կանանց տնտեսական հզորացում» ծրագրի մշտադիտարկման «Մարտահրավերներ և հնարավորություններ» տարածաշրջանային աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Լ.Քայանթարյան/

2.3. Հաղորդում՝ Լյուքսեմբուրգ քաղաքում 2020 թվականի հունվարի 22-ից 23-ը Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից կազմակերպված «Վիճակագրությունն Արևելյան գործընկերության միջոցով» (STEP) տարածաշրջանային ծրագրի հիմնական ազգային համակարգողների երկրորդ հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա. Սաֆյան/

2.4. Հաղորդում՝ Լիտվայի Վիլնյուս քաղաքում 2020 թվականի հունվարի 28-ից 31-ը Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից «Վիճակագրությունն Արևելյան գործընկերության միջոցով» ծրագրի շրջանակներում կազմակերպված «ԵՄ բիզնես ռեգիստրների կանոնակարգերի և առաջարկությունների ձեռնարկի» վերաբերյալ ուսումնական ծրագրին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Վ. Արևշատյան, Ի. Բարոյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ 7, դեմ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ